

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինյ	համար
Տարեկան	12 Թր.
Վեցամսեայ	6 "
Արսասանականի	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Ստեփանյի	համար
Տարեկան	3 ցր.
Վեցամսեայ	1.50 "

Իրանցական տղր առաջին երեսին համար 40 սխիլ վերջին երեսին համար 20 սխիլով հ. երեսին առաջին անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայն

Վառնայի համար 40 սխիլով

ՉԱՐՔԵԱԲԹԻ

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ. ՔԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՈՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇՈՐԱԿՈՒՆ ԵՒ ՇՈՐԱԿՈՒՆ

Նախակ և գրամ որդիկ նվազագույնը հասցեիս

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie)

Արսասանականի համար 3 ցր.

(20 ՍԽԻԹԻՄ) Պուշկարինյ համար 8 ցր.

Գրաքննիչ և չեկ տեղի

«ՇՈՐԱԿՈՒՆ»-Ի ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵՆ

ԳԼԵԹՈՒՆԻ

ԱՆՅԵՍՏԻՆ ԵՒ ԿԵՐԱՍՏԵՆ

Գրասէր հայ հասարակութիւնը կը յիշէ որ 1900ին Վիեննայի Միջին-արևմտեան տարածքին լոյս տեսած էր «Չէյթուներ անցանցին և ներկայիս» անուն գիրքը մը : Ասիկայ դեռ բուն գործին առաջին մասն էր և կը պատահէր մեր սրտին այնքան մտախնայաբար որ մեր անկողնէն դուրս գալու կարողանալու համար մղած հերոսական կոռնները : Ու մինչ անոր ընթացքումէն ոգեւորուած անձկանք կըրպարէինք լոյս տեսնելուն նաեւ թ. մասին , որ պիտի խօսէր նորագոյն դէպքերու միայն այս յեռնցի հերոսներու կեանքին : Այս թ. մասը հրատարակուած է հիմայ , Բարիքի մէջ , նոյնքան մաքուր , ու խնամուած սպառողութիւնով՝ որքան Ա. մասը :

Պ. Չէյթուներին հայ-յեղափոխական գրականութեան նուիրած այս երկրորդ հատորը կը բաղկանայ 240 մեծագիր էջերէ , որ ոչ միայն ակադեմիկ մը այլ և մասնակից վիպիկ մը անկեղծ ոճովը պատմուած են պատմաբան Չէյթուներին ժամանակակից դէպքերը : Ա. մասը Չէյթուներին անցանցին էր , Բ. մասը մասնոր ներկայիս է :

«Առաջին մասին մէջ կոչ պ. Չէյթուներին գրքի յառաջաբանին մէջ նկարագրուեցան Չէյթուներ հերոսական կոռնները ու պատերազմները , իր առաջադրուածները ու կրօնական զիջքը պահպանելու համար ըրուած ճիշդը : Երկրորդ մասին մէջ Չէյթուներ պատերազմները այլ ևս գործ կըլին իրենց անհատական ու ինքնակամ բնութեանը մէջ և քիչ շատ ազգային նկարագիր կստանան » :

«Չէյթուներին , իր կղզիացած վիճակին մէջ այլևս անտարբեր չհանդիսանար ազգային ճակատագրին և Հայաստանի անցողիկ քարտէսին , անակամ կը դնէ հեռու որ արձագանգներուն , իր հայրենակիցներու ցաւերուն , ազատութեան ազգայիններուն և իրերու անողորմ ընդհանր կը մտնէ ազգային ընդհանուր շարժման ալիքներուն մէջ , միշտ պահելով սակայն իր յատուկ պատերազմողի մասնաւոր դրոշմը » :

Բանալով գրքին առաջին երեսը կը գտնենք մեծ խնամքով պատրաստուած պատկեր մը , որ Ֆրանցիզի անհայր համբաւուած Տ. Բարթոլոմէոս

վարդապետինն է : Սպիտակ նոյգի մը վրայ նստած՝ հրացանը ուսին եւ կո՛րծքէն կախուած խաչին քովիկը շարուած բաղմամբի փամփուռներով՝ դադարակալան հայ վարդապետն է ասիկայ : Գիրքը կը պարունակէ նաև ուրիշ երկու պատկերներ , որոնց մէջ կը գրքին առաջին մասին մէջ յիշուած չորս Չէյթուներ իշխաններէն մեկուն՝ Շովրոյեան Հազոր իշխանինն է , իսկ միւսը կը ներկայացնէ կրկին Ֆրանցիզի վանահայրը՝ այս անգամ վարդապետական վեղարը գլխին , խաչը կո՛րծքին եւ ալ ձեռքով յաղթականորէն վեր բարձրացուցած իր այն պաշտօնի թուրը , որուն տակէն անցան ի նշան հաւատարմութեան Չէյթուներ գրուած զորանոցին ընդ որ թուրք զինուորները «էյվալան» կանչելով :

Հեղինակն այս մասին սկիզբը կը պատմէ Չէյթուներ 1895 ի պատերազմին պատճառները , կը նկարագրէ քանի մը դէպքեր , որոնց չկրնար հանդուրժել ի բնէ ուղղակի այս ժողովուրդը , և երբ տեղից հայերն արդէն բարձրուած դուրս եկան մը մէջ են Արեգին գիւղը կը յայտնուին 6 օտարական հայեր , Մարաշի կառավարութիւնը կիմանայ ասիկայ եւ անմիջապէս Չէյթուներ Արեգին խումբ մը ստիպաններով հոն կը գրկէ՝ կերպով մը այդ օտարականները ձեռք անցնելու համար : Ասլան Պէկ կուգայ Արեգին՝ տուրք պահանջելու պատրուակով : Գիւղացիները կը պատասխանեն թէ «այժմ դրամ չունենք» երբ ունենանք կը վճարենք» : Ասլան Պէկ կը բարկանայ և 6 օտարական հայերը կը պահանջէ իրենցմէ : Արեգիցիները կը պատասխանեն թէ «իրենք չեն կրնար իրենց սիրելի հիւրերը անգութ կառավարութեան ձեռքը յանձնել» և անարգանքով գիւղէն դուրս կը վառնեն Ասլան Պէկը :

Թէեւ այս տեսակ դէպքերով արդէն յարուած են Չէյթուներին եւ կառավարութեան յարաբերութիւնները «մասնաւորապէս սակայն 6 հայ օտար հայերուն դառնաւ ստիպ կուտայ Հազոր իշխանին՝ Բարթոլոմէոս վարդապետը իրկելու , Չէյթուներ գիւղացիները հաւաքելու համար ի Մուսթ Չոր . . . »

Եւ ընթացողը կը գտնէ հոս Մուսթ Չորի պատկանելի ժողովին վերջին աստիճան հետաքրքրաշարժ նկարագրութիւնը , ինչպէս նաև 6 օտար հայերուն հարցաքննութիւնը Հազոր իշխանին հրամանով : Վեց օտար հայերը նազարէկանին վեց օտարաբնակներն են Աղասի , Հրաչեայ , Ազաճ , Նշան , Մլէն , Կարապետ :

Մուսթ Չորի ժողովին ատենապետը Աւագալ գիւղի Գոճահան Թարուսին Աղան , որ այժի հօտերու հովիւ մըն էր , կանոնաւոր կերպով կը հարցաքննէ Աղասին իմանալու համար թէ ինչ մարդիկ են ասոնք : Հարցաքննութեան միջոցին Պ. Աղասին կը յայտարարէ թէ չորս մեծագոյն պետութիւնը հայոց օգնելու խոստումը տուած են :

— Ո՞ր չորս պետութիւնք , կը հարցնէ Թարուսին Աղան :

— Ռուսիա , Անգղիա , Գերմանիա եւ Իտալիա :

Թարուսին Աղան չհաւատար որ Եւրոպական պետութիւնները օգնեն հայերուն , բայց Պ. Աղասին կը պատահապէս զինքը թէ չհասկնար աշխարհավարութենէ ու կաւելցնէ . «արդէն իսկէնտերունի ծովախորը լեցուած է Անգղիոյ մարտանաւերով եւ հազարաւոր զօրքերով . ո՞չ ապաքէն մեզ խրկողն ալ այն է » :

— Չձեզ Անգղիան խրկեց :

— Ոչ միայն Անգղիան , այլ եւ վերոյիշեալ պետութիւնք միանգամայն :

Թարուսին Աղան կուգէ տեսնել այդ պետութեանց պաշտօնական զբոսովները , բայց Աղասին կըսէ թէ «Թարուսի մտնողին այդպիսի զրուսթիւն կրկը վստահաւոր է և բարձրուած ասերը՝ պատկանելի պետութեան նախատինք ըլլալով հարկ չէ տեսնուած . . . » Թարուսին Աղան կը հարցնէ թէ Աղասին ընկերութիւնը ամբողջ ազգը զինելու և պարենաւորելու քաւական դրամ ունի : « Ընկերութիւնը շատ հզօր է կը պատասխանէ Աղասի , միթո՞ւաւոր դրամ ունի և ամեն օր հաւաքելու վրայ է » :

Պ. Աղասին կըսէ նաև թէ ազգը անպատճառ պիտի փրկուի , իրենց կեդրոնը երբէք չսխալուի :

Եթէ հարկ է հաւատալ այս գրքին մէջ ըստաններուն հնչակեան գործիչներու ներկայութիւնը վնասներ հասցուցած է Չէյթուներ գործիչուն , Չէյթուներ յիսին հովիւն ու գեղջուկ Տէրտէրը աւելի հոռու յեղափոխականներ եղած են քան նազարէկանին վեց օտարաբնակները :

Ժիքներով , Մուսթաֆա Ռէֆիք Փաշան անթիւ ուղարկուած թիւ 13 թիւ 110,000 հոգիները բանակ մը անբաւական գտնելով Մուսթանին կը հետագրէ որ 50 000 հոգի եւս խրկուի իրեն : Մուսթանը նեղանալով պաշտօնակիր կըսէ զինք և իր տեղը կը նշանակուի էթնէմ Փաշան , որ նոյնպէս կը հետագրէ թէ այդ բանակով անկարելի է գրաւել Չէյթուներ :

Խիզախ Չէյթուներները յաղթականորէն կը զիմարեն այդ անհղ բանակին յոյսի և սիրտանքի լոյս մը սփռելով ազգային ընդհանուր առաւանդներ վրայ . կը շարքեն թուրք զօրքերը . կը գրաւեն Չէյթուներ գօրանոցը իր բոլոր միներքերով և երկու թնդաւորով . կը գրաւեն Միլլայի Իֆէթի Պէյը , 50 սպայ , 600 զինուոր և Գայմազամ Ավինի Պէյը . վերջի վերջոյ պատրաստը կը վերջանայ Չէյթուներներուն պատուաբեր հաշտութեան պայմանագիրով մը . զոր կը գտնենք այս գրքի 71-րդ երեսին մէջ՝ 16 յօդուածներէ բաղկացած :

Թարուսի հիզիմակն իր գրքին վերջին 164 երեսները յայտկացուցեր է լայնորէն ծանօթացնելու հակար Չէյթուներ կեանքը հայ հասարակութեան և ըրեր է ինչ որ կարելի էր «ճիշդիմ ծանօթութիւններ տալու համար տեղական բարքերու մասին» : Հոն կը գտնենք քանի մը հատ Չէյթուներ ժողովրդական երգերէն ու ճիւղակներէն և ընդարձակ յաւելուած մը , որ կը պարունակէ լայն տեղեկութիւններ Չէյթուներ ազատութեան առաջին ճգնաժամներու մասին իր բոլոր պատերազմներուն ու դէպքերուն յուսակով . տեղեկութիւններ անոր տընտեսական վիճակին , բարքերուն և կրօնական ըմբռնումներուն միայն , ինչպէս նաև ընդարձակ կենսագրութիւնները հանրածանօթ Տէլի Վէլիչ Տ. Օհանին և Դաւիթ վարդապետին :

Ահաւասիկ գիրք մը՝ որուն բնութեցումը հաւատք և յոյս կը ներշնչէ լեզ : Եւ դուք զիրքը ծայրէ ի ծայր կարողալ լսնցնելն ու գոցելն , ետքը հիացումի և պատկասանքի խառն ըզգացումով մը համակուած՝ կամայ ազգային կը մղուի մտածելու և անգամ մը ալ համոզուելու թէ՛՝ այդ ազգը անհուսապէս պարտական է ծաւառի այս անզուգական հերոսներն ուն եւ թէ Հայաստան աշխարհը այժմ տառապանքէն և այնչափ արեւելն ետքը որ մը փրկուելու է անկասկած՝ քանի որ իր ժայռէ ծոցին մէջ կը ձնին ու կաճին Չէյթուներներու նման անվեհեր մարտիկներ և ամբիժ հայ երասկներ :

Տիգրան Աճեմեան

ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍ

Շարժվելու անհրաժեշտ է անհրաժեշտ է անհրաժեշտ է...

Սա էտիկետի սրածը, յուսալիտ եւ ամբողջով, մէկ քանի ժամ զուտ հասկանալու շունչով մը հեւաց, երեւոյթի յայտագրին մէջ լայն տեղ տրուած էր ժողովրդական երգերու, որոնք գեղարուեստօրէն զուարթ, լազկան, յուզիչ շեշտերով կը մնչեն, կը գրուան հայ կեանքը, հայ գիւղացիին սէրը, վիշտը, տառապանքը:

Սեբեր հայրենիքը, որով բացուեցաւ երկկողմէր, երկսեռ երգեցիկ խումբին կողմէ երգուեցաւ, դաշնակի վրայ ընկերակցութեամբ Օր. Տ. Տավուսեանի եւ Օր. Ա. Արէլեանի, Հայ ցաւին անմոռանալի այս մեղեդիին խելոյն յաջորդեց զուարթ ու զիզուկ սիրերգ մը. Օյ Անգուլնը, Օր. Չօլաբեան անանձին երգեց Աւրի իմ սիրուիչը, վարանտ բայց սրտայայտ յեշտերով, ծափահարուեցաւ: Գամուտ-Քամիայի «Գանգատներ»-ը յետոյ, երկ երգեցիկ խումբին կողմէ, Վէտայի Նանկին, որուն եղանակը յորինած է Պ. Նաթան, — անանձին երգեց Օր. Չ. Նորիկեան, դաշնակի վրայ ընկերակցութեամբ Օր. Մ. Տավուսեանի եւ երգ. խմբի: Օր. Նորիկեանի այնքան համարձակ որքան տալուորիչ երգուածքը ծափեր խելց հանդիսականներէն: Եւ պէրթի Մարքը, դաշնակի վրայ Օր. Տ. Տավուսեանի եւ Պ. Նաթանի կողմէ, եկաւ Նանկին թմրութիւնը վանել իր ոգևորող խաղերովը, եւ անա որոտայ Իգին Ունչերը, արական խումբէն քառածայն:

Առաջին կենդանի պատկերը կը ներկայացնէր կոտորածի արկնոտ զրուաց մը, որ իր բուպական երեւուածովը ստեղծուած սարսուռ մը անցուց սրածին վրայէն:

Երկկողմէին երկրորդ սասը սկսաւ Հայ եղբայրներով, զոր երգեց արական խումբը: Յետոյ դաշնակի վրայ Օր. Ա. Արէլեան անց Պրատուկարտի Միլոսիտ Տի Պուան, որ իրօք անուշ մրմունջի մը պէս թրթռաց նուազարանին ստեղծաշարին վրայ: Օր. Միրանոյ Մեկքոնեան արտասա-

(1) Մենք համարձակ չենք այս քանի մը տողերուն:

նեց Չօպանեանի Օրօրը, իր մեղմ, բուռն, ողորդիչ ու տիրական ձայնին ելեւէջներուն վրայ Չօպանեանի հոյակապ քերթուածը կենդանացաւ պահ մը, եւ իր մորմոքող ներգործութեան ներքեւ մոլորիկն ծափահաւորութիւններ պայթեցուց, որոնք իստես կանչեցին օրիորդը: Պիզէի Գառնիկէն հասուած մը քառածայն անեցին Օր. Տ. Տավուսեան եւ Պ. Ն. Ամիրխանեան. Դեհ ֆաշիգիք ժողովրդական սիրուն երգը, հայ մշակութիւն արտական ողբը, երգուած Պ. Ն. Գէորգեանի կողմէ, ընկերակցութեամբ երգ. երգեցիկ խումբի, լաւ տպագրութիւն թողուց ունկնդիրներուն վրայ:

Օր. Չ. Նորիկեան անանձին երգեց Օրօրը (Փրօթ. Գալփայեան) շատ յաջող եւ սրտաւայտ կերպով ու իտես կանչուեցաւ: Օր. Տ. Սարգիսեան, ընկերակցութեամբ ամբողջ երգեցիկ խումբին, երգեց Սասունը (Ն. Պ. Ամիրխանեան):

Երկրորդ կենդանի պատկերը կը ներկայացնէր մէկ քանի հայրուկներ ընդզուով մոլորիկն մաքառուած մը ետք, վիրաւոր եւ խնջասպառ, եւ հայ արիւստի օրիորդներ անոնց օգնութեան կը փութան վերջերսին կապելով եւ կազդուրելով զիրենք:

Երրորդ մասին բացումը կատարուեցաւ Մարտի դաշտը գոռ եւ ելեւտարացնող երգով, զոր որոտացուց արական երգ. խումբը: Անվերջ ծափերու տակ ծածկուեցաւ: Անոր մարտական զայրուցքին յարգեց Գառնիկ Տեւիկ ժողովրդական անգութեան երգին իննիղոտ զուարթութիւնը, Անկարելի է նկարագրել պիւսերու եւ ծափերու որոտը որ սրահին մէջ գոռաց. առաջին երգն էր զոր հարկ եղաւ կրկնել եւ խորհրդիկ մարմուտները անվերջ ծափահարութեանց մէջ կորսուեցան, Գամուտ Քամիայի թռչէն ետք, զոր պարտաւ Յրանտեան երգեց այնքան տպաւորիչ եւ յուզող շեշտերով ընկերակցութեամբ երգ. խումբի, Օր. Չ. Նորիկեան թեմ հլաւ, սեւերու մէջ, մազերը ճիւղացան, Գամուտ Քամիայի Սրբը արտասանուելու, Այս անարուեստ եւ նոյն իսկ տկար քերթութեամբ իր յորինուածքին մէջ կեանքի տնջ անոյշ հոյակ մը եւ տապաւորիչ միամտութիւն մը ունի, որ ունկնդիրը լացնելու աստիճան կը ցնցէ, եւ լացողները պակաս չէին շարժ գիշեր, երբոր Օր. Նորիկեան արտասանեց զայն ինչպէս շատ քերչեր կարող են արտասանել: Երկկողմէին ֆլուէ եղաւ, Միայն իր ժպիտը, հակառակ շատ հաւաքին բան մը ունենալուն, տեղ տեղ աննշմարելի կերպով տպագրութիւնը կը մեղմացնէր, Շարժումներու, զրուցուածքի եւ նախածքի այդքան բնականութիւն եւ մանաւանդ համարձակութիւն փորձ արուեստագէտներու վրայ միայն կարելի է գտնել:

Ձեռքուն Անկարելի յետոյ, զոր արական երգ. խումբը երգեց, դաշնակի վրայ ութը ձեռքով Մաղդերիկը (Շարժեցաւ) անեցին Օր. Մ. Տ. Տավուսեան, Ա. Արէլեան եւ Պ. Ն. Պ. Ամիրխանեան:

Մրաժշտական հատուածներուն մէջ էն յաջողն եղաւ ասիկա՝ զոր խանդավառ ծափեր կրկնել տուին:

Վերջապէս Յառաջ Գանգի հայրենասիրական քաղերգը խիզախօրէն եւ հանդիսաւոր կերպով փակեց խմբերգներուն շարքը: Օր. Բ. Չօլաբեան իր մեղմունչ ձայնին էն սրտաթուց

լարերը թրթռացուց, եւ իր քիչ մը անելի համարձակ երգուածքով զգացուց թէ այդ կացութեան հետ ընտելանալով պիտի կարենայ հետզհետէ անելի ազդու եւ անելի համարձակ ըլլալ: Օր. Տ. Տավուսեան եւ Ա. Արէլեան կը նկերանային դաշնակի վրայ, եւ ամբողջ երգեցիկ խումբը: Վերջին կենդանի պատկեր մը՝ յեղափոխութեան աստուածացումը, Մայր-Հայաստան-Օր. Ս. Մեկքոնեան-ի զարուար տառազանքին յուսահատութեանը մէջ՝ մուրուռ աչքը ժուռ կածէ չորսդին եւ անա Փրկութեան հրեշտակը իրեն մասնանկը ընէ խումբ մը յեղափոխականներ, որոնք ընդզուով կարմիր դրօշին շուրջ բոլորուած՝ ժայռի մը վրայ կը կանգնին հպարտ եւ վճռական:

Այս վրդովիչ եւ յուսադրող տեսարանին դիւթութեանը տակ էր որ մեկնեցան հանդիսականները:

Մեր արդի կացութեան մէջ, այս երկկողմէր, մանրամասնութեանց մէջ իր յատկաւ կամ նուազ թերութիւններովը հանդերձ, ամէնէն սրտապնդող, ամէնէն աղուոր, եւ քաջաբերիչ երեւոյթներէն մէկն է զոր կարենայ ընծայել հայ նոր սերունդը: Անիկա իրոքստ արհամարհանքն է նետուած նախապաշարուածի եւ պաշտանդական արտաբոյր ոգիին դէմ, անիկա բարձրազարդ զերգանցութեան հոյցն է նոր մտաւորականութեան ընդդէմ բորբոսած հինին: Եւ երբ հայ օրիգրները, դասակարգի սխալ մրմունչով յիմար նուիրականութեան մը կապանքը խզիտելով յօժարափայլ կուգան արուեստի վանքին վրայ իրենց իտնարեղ թայրներուն ձեւք սալ հայ Ցաւ երգիւն եւ հայ սրտերը արգասանք յոյզերով ունեցնելու, անած կըլլան հոգր քայլ մը որ իր ակօսը խոր կը փորէ մեր յատկաշիջութեան ստուերոտ ճախրուն մէջ, Յարգանքի ընծայում մը կը պարտինք իրենց, ինչպէս բոլոր այն ետանդուն երիտասարդներուն որոնք այսքան բեղմնաւոր գործունէութեան մը սպասցոյցը կը հանդիսադրեն:

Գաշնակը հանգիսին հրապարտեցն մէկը կը կազմէր. Տավուսեան Օրիորդները, եւ Օր. Ա. Արէլեան սանդնաշարին արջն ներսնաշակ արուեստները համարձակութիւն մը ցոյց տուանքն եւ իրենց նուազած բոլոր հատուածները հիացմամբ ունկնդրուեցան: Մաղթելի է որ մեր բարձր դասակարգի Օրիորդները այս օրինակ գեղեցկագիտական վարմունքներ ընդօրինակեն փոխանակ սնտի կապուցութեանց հետեւող հանդիսանալու:

Իսկ Պ. Ն. Պ. Ամիրխանեանի գործը ինքնին այնքան պերճաբոյ է որ դրուատիքի պայմանագրական բանաձեւեր խնայել կուզենք իրեն: Միակ կը մաղթենք որ իրեն նման անանկները ցանցառ յըլլային մեր մէջ, վաճառքի շատ պէտք ունինք անոնց:

զուտ են արդարանալ հէնց այն բաների անունով, որոնցով նրանց պէտք է դատապարտան, նրանք խօսուած են ճշմարտութեան, արդարութեան, իրաւունքի, օրէնքի եւ անաշատութեան մասին... Սակայն նրանց կարող էր այդ աղօղվել միայն մի դէպքում. երբ ճնշվէին, ոտնակոխ լինէին մարդկային այդ սրբազան եւ բարձր կղզուները:

Այդ երեւոյթը բոյն է դրել խոր արմատ է ձգել եւ մեր հայերիս կեանքում Մեր գրականութեան մէջ կերտեցանք մեր մի վիպասանի կամ բանաստեղծի գրական մի անաղող աշխատութիւնը, հղինակն անպատճառ մի բան է գրելու: Երբ քննադատում են հրապարակախօսին իր սկզբունքները, դաժապարներին եւ հայեացքներին համար նա էլ անպատճառ մի բան է գրելու, բայց ոչ կարգին մի բան, մի պաշտպանողական պատասխան: Գոնէ մի հայհոյանք, մի ցեխ պիտի ստանայ քննադատը... Այդ երեւոյթը մեզանում այնչափ է կրկնվում, որ պարզ սովորութիւնից սկսվում է օրէնքի փոխվել:

Մականյն դժբախտութիւնը հէնց դրանում է, որ շարժքը դուրս է ընկել գրականութեան շրջափակից եւ տարածել, շաղ է սովել իր արմատներին հայ հասարակութեան բոլոր խաւերում, բոլոր կարգերում: Չարիքը, մեր բաղդին, հասարակական է դարձել: Գննադատեցէք մի հասարակական գործիչ վնասաբեր արարմունքը, մի ողբային հատուտագրութեան յոյժ ուղղութիւնը կամ վարչական վատ կազմը եւ վստասութեան պատասխանեցէք պատասխանի, եթէ ոչ լուրջ, արդարացի, կարգին պատասխան, զէթ հայհոյանքի, ցեխ մի գարշելի տարափ թափվելու է ձեր գլխին: Մեր մէջ այժմ այդպէս է կանոնը, այդպէս էլ հասկանում ենք իրար:

Վերջերս հնչակեան պատակուածի առիթով գրել էինք մի փոքրիկ քննադատական յօդաւ «Շուրջներս» խորագրով, ուր մեղադրում էինք հնչակեան հատուածներին էլ՝ իրանց անյրճահայեցութեան եւ գեղեցկութեան համար՝ միութեան եւ բաժանման գործերում: Դրան իբրեւ պատասխան տպից «Շարժում» 506-րդ համարում Անաշտանի պէտք է յսկերագրով մի յօդաւ, հնչակեան կուսակցութեան (հին) կենտրոնի անգամ պ. Ս. Սաբունեց, Պարոնը փոխանակ ուղղակի մեր ասաններին պատասխանելու, իր յօդաւի գրեթէ երեք շորորդ մասում էլ ընկնում է այն պատմութիւններին մէջ, որոնցում կարծես միութեան վրէժն է նա, իր հոգին է զովացնում, Նա պատմում է թէ ինչ բաներ են անդի ունեցել «գաւազիր խմբակի» հնչակեանցութեան ուսած յուզայական հանդիպից յետոյ... Ամերիկայում, Լոսանոսում եւ այլն, եւ այլն:

Մենք կաշխատեմք մատնացոյց անել եւ կ'անց աւել պ. Սաբունեցուածի երկու ամենակարեւոր կէտերի վերայ: Մենք կաշխատենք ցոյց տալ իրողութիւնները վրայ հիմնվելով թէ ինչքան տրամաբանութիւն կայ պարոնի ասաններում եւ միեւնոյն ժամանակ պարզել նրա պատասխանի գրական մաքրութիւնը, արժանիքը:

Մենք մէջտեղ կը բերենք մեր «Շուրջներս»-ից այն պարբերութիւնը որ քերի է պ. Սաբունեցու վէրքը եւ

ԴԱՐՆԱԿ ԵՆՈՒՋՆԵՐՍ

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. Ս ՍԱԳՈՒՆՈՒՆ

Դատական գործերում դուք յամա կարող էք տեսնել թէ ինչպէս ամբաստանեալներ, նոյնիսկ մարդապաններ ձրկեր են թափում, ու-

նրան անչափ ցաւ է զգոցրելու կաշ-
խատենք հէնց հնչակեան աղբիւնե-
րից վերջած փաստերով պայտուցա-
նել մեր աստծոնքը : Ահա մեր այդ
կտորը .

«Յամենայն դէպս երկու կողմերն
էլ քատարտելի են իրենց ներկայ
կարայրասպան . ազգայնաս պատու-
տուով . Երկու կողմերն էլ կանխա-
պէս համազամ էին իրենց ար-
ւեստական սխալեան ներկայ վախ-
ճանին . ուրիշ կերպ էլ չէր կարող
լինել . իրենց կրօնական կրօնակցու-
թեան մահաժամը հատուածներին մի
ժամանակուս հոսանք տայու հա-
մար . նրանք զսկզկն ամէն անկեղծ
հաղոցունք . ճգնում . գործի լուրջ
քննարութիւն եւ շրջանայեցութիւն .
Որպէս հմտա խաբարաներ . նրանք
ըմբռնել էին արտասանական հայ
ամբոխի հոգեբանութիւնը . տրա-
մադրութիւնը եւ ունեւորի անելով
մի արեւնաթաթախ գերի ժողովրդի
անհաւանական լաշալը—ազատու-
թիւնը . ամենայն անցիկութեամբ
շահագործեցին նրան . հիմնելով այդ-
պիսի խախտու հիմերի վրայ միու-
թիւնը . որը լոկ անուսով է գոյու-
թիւն ունեցել . իսկ այժմ պատկերը
բացում . ներկայանում է հայ ժո-
ղովրդի առաջ...» (Շարժում . թիւ
496) :

Սրան իբրև պատասխան պ Սա-
ղունի նրա պատասխանում է .

«Բայց պէտք է գիտնալ նաեւ . որ
նրոպայի մի անկեղծում նստած .
ցնորաբանութիւններով ու պիտակ-
ցարար ջուր պղտորելը խիստ ան-
վայել լինելուց զատ . նաեւ անչափ
վնասակար է ընդհանուր գործի շա-
հերի տեսակէտից . որի անուսով
խօսում է պարոնը ու տարբեր ձեւի
դաւաճանութիւն դէպի ընդհ . նպա-
տակը .»

«Ո՞վ կարող է երեւակայել . թէ
դաւաղիները երեւակայում են առ-
երեքս ամեն ինչ ընդունել . աւար-
ւայ մը միջոցին ամեն բան նորից
չտկելու . եթէ հարկ ըլլայ աւելի
ազդու միջոցներու ալ գիտնու...»
գիտատրութեամբ . Սակայն ոտե-
ղից է վերցնում պ Շարժեանը ու
ինչ գիտէ թէ . հնչ կրօնակցութիւ-
նը «համազամ էր միութեան ներկայ
վախճանին—բայց—զոհեց ամեն ինչ
միայն ժողովրդին խաբարու համար...»
ինչ կոկորդիլոսի արցունքներ է
քամում պարոնի աչքերից եւ գատա-
պարտել տալիս երկու կողմերն էլ .
իրենց «եղբայրասպան ու ազգայնաս
պատակուտով . ինչ անուն տայ այդ
համ տաքին . համ ստախ փշուրն .»

Նախ ասեմք . թէ երբեք մտադիր
չենք պաշտպանել վերակազմ հնչակ-
եաններին ոչ մի արարքը . նրանց
գործունէութիւնը ցոյց է տալիս .
թէ նրանք մինչև այժմ հայ յեղա-
փոխութեան իսկապէս ցեցերը վնա-
սակար տարբեր են եղել եւ դեռ չա-
րունակում են լինել . Սակայն դա
զեւ չի կարող ծառայել որպէս առ-
հաւատչեայ . որպէս պաշտպան . թէ
դուք էլ . հնչ (հին) կենտրոնական
վարչութիւնը էլ մեղաւոր կամ գի-
տակից չէք հնչ . վերջի անցուդարձ-
քերին . Հարցնում էք թէ որտեղից
եմ վերցնում փաստերը . Դուք . քնք-
ները . անթիւ փաստեր էք տալիս
մեր ձեռքին . պ Սաղունի :

«Նոյնպիսի մահաժամատ պատաս-
խաններ տալուց նաեւ Շահրիմա
նի մատուցեան . Գրիգորեանի գո-
ղութիւններին (որի քառակուսի ա-
պացոյցը տաւ կենտ . գոնձարանի

վերաբերմամբ իրա ընթացքով) . եւ
Փափագեանի դաւադրութիւններ
մասին աւած մեր հարցերին :»

Այս սողերին ճանաչում էք . պ
Սաղունի . չէ . Դրանք ձեր օւկունի
այս տարւայ (1903) առաջին համա-
րում . այդ սեւ «պաշտպան յայ-
տարարութիւնից իսկոյն յետոյ տպ-
ված առաջնորդող յօդածիցն են .
Շատ ուղիղն էք խոստովանում .
սենք չունք տարակուսում դրան .
Այո . «մահաժամատ պատասխան
ներ» էք ստացել . Շահրիմանի
մատուցեան մասին . լաւ . Բայց
երբ էք ստացել դրանց . Այդ մատ-
ուցութիւնը հրատարակից հնչ . միու-
թիւնից մօտ մի տարի առաջ «Շար-
ժումում . Լսում էք . մօտ մի տարի
առաջ . եւ դուք արան այժմ էք խո-
ստովանում . պաշտպանութիւն յետոյ .
«Միացեալ կենտրոնի» ձեր միւս ըն-
կերակիցներին նկարագրիւններն էլ վա-
ղուց վերլուծում էք «Հարեանք»
թերթը . Դուք այժմ էք դրանց իր-
իււ փաստ ցոյց տայիս :

Էմիլ Շարժեանց
(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Յ իւրիս 12 ապրիլ 1903

Վերջերս ձեռքս անցաւ Պ. Փոր
թուգալեանի «Միմենիտ» թեր-
թին փետր . 14ի թիւը . Այնտեղ
կարդացի «Սխալ քայլեր և պատ-
րիարքի սպանութեան փորձը»
խորագրին տակ դատողութիւն-
ներ խմբագրութեան կողմէն և
ենթագրական իրողութիւններ
Պալտայ թղթակցին կողմէ . Սր-
տի դաւանութեամբ տեսող թէ
ինչ ստորագրանի զգուցի և
ստոր միջոցներու կը գիմեն ա-
նուանարկելու համար անհատ-
ներ . և այդ միջոցով պղտորելու
հասարակութեան վտանգութիւնը
դէպի յեղափոխական կրօնակցու-
թիւններ . եթէ այս վերջինները
իրենց հաճելի ըլլալու բազմը չեն
ունեցեր :

Այդ թղթակցին դատողութիւն
ները և խմբագրութեան ամէն
մէկ ըստմենքը հերքել զուր աշ-
խատութիւն մը կը ըլլար . և ես բա-
ռով մը իսկ զբաղիլ յանձն չէի առ-
ներ եթէ այդ գրատմներու նր-
պատակը ըլլար միայն զիս ան-
ուանարկել և ոչ թէ կեղտոտ .
գարչելի միջոցներով նուիրակա-
նութիւններ հալածել :

Իողով մանրամասնութիւն-
ները մէկ պարագայ միայն կը
չի չեմ . որ արդէն ցոյց կուտայ
բարոյական մակարդակը թեր-
թին ու իրեններուն . Այնտեղ
ըստում է . «Պօղոս Գարբիէլեան
անուն մէկն է . բժշկական ուս-
նող . որ Պատրիարքը սպաննելու
համար դաւադրութիւն մը կազ-
մակերպեր է և հոս ու հոն վճիռ-
ներ տալ է պէտք եղած յար-
գադրութիւնները ընկել յետոյ .
ի՞նչ է իւր գացեր է Եգիպտոս
բողոքի անցուցումը . համար

գալիք բոլոր պատահականու-
թիւններէն . . . Եւ յետոյ Եգիպ-
տոսէն զրկեր է Պօլիս անուններ
պարունակող համակներ խտրվա-
կան փոստով . և այլ . և հաստա-
տելու համար այդ ցնորաբանու-
թիւնները կառավարութեան հը-
րաման հանած և զիս դատի են-
թարկած ըլլալը առաջ կը բերէ :

Ընթերցողին կը թողնէք գա-
տել թէ այդ նաչիմական տեղե-
կագիրը «բքան կը համապա-
տասխան իրողութեանց . Ես
սեպտեմբերի մէջ մատուցայ
այլատեքածէ մը իբր յեղափոխա-
կան . իմ բացակայութեան մեր
սուրը խուզարկուեցաւ և առ-
նուեցաւ հսկողութեան տակ .
այլեւ վտանգութիւն չունենալով
տուն վերադառնալ և տաճկական
արդարագատ ատեանին առաջ
իմ արդարութիւնը պաշտպանել .
հարկագրուեցայ հեռանալ Պօլի-
սէն . իմ հեռանալէս 4 ամիս յե-
տոյ կը պատահի սպանութեան
փորձը . Ես զանց կընեմ քննել
այն տխմար փաստը որով «Ամե-
նիտ» թղթակցից կուզէր հաս-
տատել իմ մասնակցութիւնը այդ
գործի մէջ . բայց կը մղուիմ
հարցնելու թէ՛ մարդ որքան ա-
պուշ ըլլալու է որ յեղափոխա-
կան գործի վերաբերած թղթակ-
ցութիւն մը յանձնէ խտրվական
փոստի Պօլիս երթալու համար .
այնպիսի ժամանակի մը մէջ երբ
ամենատղէտ մարդն անգամ նոյն
իսկ իր անհատական գործի վերա-
բերած նամակները չուզեր յանձ-
նել թրքական կամ խտրվական
փոստին . Ստոր կարելութեան
հաւատացնել կարծելով ուրա-
խացող . հալածելու մարմալէն
բանուած այդ զգուցի թղթակցին
սրտի ու մտքի վրձակի դատողու-
թիւնը ընթերցողին կը թողնէք .
Մենք կը կարծէինք թէ միայն
տաճկական ոստիկանութիւնը կա-
րող է խեղաթիւրել եղելութիւն-
ները և ուղածին պէս մեկնել ի-
րերը . բայց կերեւի թէ պ. Փոր-
թուգալեանի արժանի թղթակցին
ալ լաւ իւրացուցած է այդ ուղ-
ղութիւնը և իմ սեպտեմբերի մէջ
արդէն խուզարկուիլս մոռացու-
թեան տուած . և չորս ամսուայ
ժամանակամիջոցը անտես առած՝
ուրիշ է ներկայացնել զիս փա-
խտական դաւադիր մը . երեւի
յուսալով սուսցնել յեղափոխա-
կանները . զանոնք ներկայացնե-
լով անձնապաշտ դաւադիրներ .
ինչ՞ զճ մարդեր :

Պօղոս Գ. Երամեան

ԱՐՁԱԳԱՆԳ

ՍՕՁԻԱՅԼԵՆ . . . խումբ մը գիտակից
երիտասարդներու շնորհիւ անձ.
եալ տարուան Հոկտեմբերէն ի-
վեր քաղաքս օժտուած է Հայկա-
կան Ընթերցարանով մը . Հակա-

ռակ քանի մը խաւարամիտներու
անվերջ քննադատութեան նորա-
հաստատ «Ընթերցարան» Ընկե-
րութիւնը կարողացաւ վիճակա-
հանութիւններով և ուրիշ միջոց-
ներով հիմը դնել այս ազգային
հաստատութեան . Ի՞նչեւ սկիզբէն
«Ընթերցարան» կազմուած էր
հազիւ 11-12 հոգիներէ . բայց
վերջին անգամ մարտ 25 ին տե-
ղի ունեցած ընդհանուր ժողովին
ներկայ գտնուող բոլոր ազգային
ները անգամակցեցան ընկերու-
թեան և ընթերցարանը հաստա-
տուեցաւ աւելի ամուր հիմերու
վրայ . Ընտրուեցաւ տոժամանա-
կեայ մարմին մը 3 հոգիէ բաղ-
կացած—Տիար Կարապետ Գու-
յումճեան . Գեորգ Տ. Յակոբեան
և Գարեգին Պօղոսեան—և անոր
յանձնուեցաւ վարչութեան 4 ամ-
սուան հաշիւները քննելու ու յա-
ռաջիկայ ընդհ . ժողովին շեք-
կայացնելը . Ընթերցարանն ու-
նի այժմ կոկիկ դրամադուրս մը
նախկատունը դրուած և յիսու-
նէ աւելի անգամներ . կը հրաի-
րենք Պօլիսի հայ հասարակու-
թիւնը չի զլանալ իր ներթակա-
ն ու բարոյական աջակցութիւնն
այս օգտակար գործին :

Հարկը կըզանք հոս յիշելու թէ
տիրահաշակ պատուելի Տ.ին
տեղէս մեկնելէն ի վեր խաղա-
ղած է քաղաքս . Ազգային վար-
ժարանն ալ լաւ վիճակ մը ունի՝
չնորհիւ Օր . Զարուհի Թաշճեանի .
գոհ են ժողովուրդն ու ծնողները .
կը յուսանք որ Օրիորդը կը բազ-
մապատէ իր ջանքերը օգտակար
ըլլալու համար ազգային մանկա-
ւոյն :

Հրանդ

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Տիգրանակո րոտի լատինական ե-
կեղեցւոյն պաշտօնեաներէն կրօ-
նաւոր մը և մայրապետ մը նե-
տելով իրենց կրօնական տարա-
զը գիտեր են հայոց Առաջնոր-
դարանը և Ս. կիրակոսեկեղեցւոյն
մէջ պատկուեր են շքեղ հանդէ-
սով :

—Ս. Զատիկին Ռշ . օրը տեղի
ունեցեր է ուսուցիչ Գարեգին
Ոսկանեանի 25 ամեայ ժանկա-
վարժական գործունէութեան յու-
բեկեանը . Իերայի վերէտիկեան
Հարց վարժարանին մէջ :

—Վիէնայի Մխիթարեանց
Տեղապահ անուանուած է Ժոռ-
նեան Հ. Թաղէոս վարդապետը .
Պալտայ նախկին վանահայրը . Նո-
րընտիր Տեղապահը բնիկ Զմիռ-
նայի է եղեր 63 տարեկան . քաջ
հայկաբան և լեզուադէտ :

—Մանթալեպետի Յակոբ
Հաճեան մեռած է Պօլիս ամսուայ
16ին . Հանգուցեալը ժամանակ
մը հրատարակած է «Միմեն» ա-

նուն հանգէս մը . երկար ժամա- նակ խմբագրապետ եղած է յա- չորագար «Մաղիկ» . «Մօզաի- ք»-ի և ուրիշ պատշաճութեթե- րու . Գրած է նաև վէպեր , ինչ- պէս . «Բերայի գիշերները» , «Կորուսեալ կտակ» , «Ներքին» , «Հեղինէն» և այլն .

—Լիմ Անպատի Տնօրէն Ժու- վոյ գիւնը և միաբանները նկա- րագրելով վանքին խեղճ վիճակը նրա թական նպաստ խնդրած են Պատրիարքարանէն .

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլկար թերթի մը դրածին նայելով Պօլսոյ մէջ մեծ խտու- թիւն կայ պուլկարներու գէմ . Խտու արգելում է ու է պուլ- կարի մը մուտքը Մակեդոնիայէն կամ Պուլկարիայէն Պօլսո .

—Վերջերս Քասրմ—Փաշայի կողմերը ոստիկանութեան երեք թուրք պաշտօնեաներ ուղարկելով ձերբակալել 4 պուլկարներ , վեր շինները անձնատուր չեն եղած և կռիւ տեղի ունեցեր է . Պուլ- կարներէն մէկը վերադարձելով միւս երեքը փախած են . Վերա- ւորուած է նոյնպէս թուրք պաշ- տօնեայններէն մէկը .

—Կառավարութիւնը միտք ու- նի եղեր յիշատակագիր մը խրկել մեծ պետութիւններուն բացառ- րելու համար թէ Մակեդոնիոյ մէջ տեղի ունեցած գէպերուն պատասխանատուն Պուլկարիան է և յայտարարելու համար անոնց որ եթէ Պուլկարիան շղարքի օգնելէ յեղափոխականներուն՝ ինչը , թուրք կառավարութիւնը , պիտի դիմէ զէնքի :

ՄԱԿԵՂՈՒՆԻԱ

Սէլանիկի մէջ Մակեդոնիայի յեղափոխականներու կողմէն եր- կու պաշտօններուն օգը հանուե- լէն եաքը՝ մեծ շփոթութիւն տի- րեր է քաղաքին մէջ և գիշերը տեղի ունեցեր է ջարդ . Կուսա- կալը հրամայեր է սպաննել ա- մէն պուլկար որ կը գիմարէ զինուորներուն և ոստիկաններուն . Պուլկար թերթերը առաջ գը- րեցին թէ ջարդուածներուն թի- ւը կը հասնի 400—500ի , բայց հիմա կըսուի թէ այս գէպերն մէջ հազիւ 100.150 հոգի սպան- նուած են . Ապրիլ 20ին Պօլսոյն քաջուած հեռագիր մը կրէ թէ Բ. Գուռը խտու պատուիրած է Սէլանիկի կուսակալին ամեն մի- ջոց գործ դնել պահպանելու հա- մար խաղաղութիւնը . անմիջա- պէս ոչնչացնել բոլոր գիմար- րութիւնները , բանտարկել բո- լոր կապաձեւիները . ամենալաւ

կերպով պաշտպանել գէպերն չմասնակցողները և օտարական- ները և խուսափիլ աւելորդ ան- գթութիւններէն ու խտուութիւն- ներէն , ինչպէս նաև զինուորա- կան և ոստիկանական պաշտօնեայ ներու կամայականութիւններէն , հակառակ պարագային պատաս- խանատու պիտի համարուին իշ- խանութիւնները .

—Լուր տարածուած էր թէ Սէլանիկի գէպերու ատեն բան- տարկուած է նաև քաղաքին պուլ- կարական գործակատարը , բայց նորագոյն լուրերու նայելով բան տարկուած չէ եղեր անիկայ , այլ ստիպուեթ է 3 օր տունը մնալ՝ չորս կողմէն թուրք զօրքերէ պաշարուած ըլլալով .

Գործակատարը հազիւ կրցեր է այս կացութիւնէն ազատիլ տեղւոյն Ֆրանսական հիւպատոսին ազու դիմումներուն վրայ .

—Սէլանիկի գէպերէն օր մը առաջ մակեդոնական կօմիտէն՝ մասնաւոր մարդերու ձեռքով հիւ- պատոններուն խրկած և քողաքին մէջ ցրուած տպալ յայտարա- րութիւններով ազդարարեր է թէ ինք գործ պիտի դնէ քաղաքին մէջ ահաբեկիչ միջոցներ քաշե- լու համար օտար շահերու և ըզ- գացնելու համար ազատ ազգե- րուն այն սարսափը , որուն նի- թակայ է միշտ Մակեդոնացի ժողովուրդը երկար տարիներէ ի վեր . Այս յայտարարութեան մէջ մասնաւորապէս յիշուած է եղեր զբարտիչի այն գերը որ ի գործ կը դնեն եղեր Մակեդո- նիոյ առասկան հիւպատոսները , կը կարծուի թէ այս յայտարա- րութենէն ազդուած ուսու կա- կառավարութիւնը հրահանգ խր- կած է իր հիւպատոսներուն ըզ- դուշանալ իրենց անձերուն հա- մար . Յիշեալ յայտարարութեան մէջ ըսուած է եղեր նաև թէ Մակեդոնական ներքին կազմա- կերպութիւնը պիտի շարունակէ իր այս տեսակ յարձակումները մինչև որ ինքնօրինութիւն մը տրուի Մակեդոնիոյ .

—Թուրքիոյ արտաքին գոր- ծոց նախարարութիւնը յայտա- րարէր է թէ Սէլանիկի գէպեր- լուն մէջ սպաննուած են միայն 7 թուրք զինուոր և քանի մը տասնեակ վիրաւոր . Իսկ օտա- րականներէն սպաննուած են զը- լիցերիական գաղղիացի մը և ի- տալացի մը , և եօթը հատ ալ վիրաւորներ կան .

—Աւստրիական մարտանաւերը հասած են Սէլանիկի առջև և ունին եղեր 50 թնդանօթ և 2000ի չափ զինուոր . կըսուի թէ քաղաքին խաղաղութիւնը վերա- հաստատուած է .

—Իւսկիւլպի մէջ տեղական իշ- խանութիւնները միջոցներ ձեռք առեր են որ հոն ալ չկրկնուին

Սէլանիկի գէպերը . բազմա- թիւ Մակեդոնացիներ ձերբա- կալուած և վարժարանները գոցը- ւած են . Զինուորներու պահպանու- թեան յանձնուեր է օսմանեան գրամատան սեղական մասնա- ճիւղը . Թուրք ժողովուրդը կը հաւաքուի եղեր «Ճամիլներու մէջ և կը վախցուի եղեր որ հոն տլ տեղի կուենեան շարգեր , ե- թէ յեղափոխականները փորձեն ուսմբեր նետել .

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պուլկարիան և Բուժանիան հեռաձայնով իրարու կապելու գործողութիւնները լքեցեր են . շուտով պիտի կրնան այդ գոր- ծիքի շնորհիւ իրարու հետ խօ- սիլ Ռուսուք . ձուրճէվօ .

ՍԵՐՊԻԱ

Հանրային լուսաւորութեան նախարար Պ. Լազարէվիչ , ար- մատական , տուած է իր հրաժա- րականը և իրեն յաջորդեր է Պ. Նիվանովիչ , ազատական .

ԻՏԱԼԻԱ

Գերմանիոյ Վելհելմ կայսրը շատ մեծ սիրով ընդունուած է Հաւ մի մէջ թէ Իտալիոյ թագաւորէն և թէ ժողովրդէն . Ապրիլ 20 ին տրուած ճաշի մը միջոցին թա- գաւորը բաժակ առաջարկեր է կայսրը կենաց և իր շնորհակա- լութիւնը յայտնած անոր մինչև հիմայ Իտալոյ նկատմամբ ցոյց տուած սրտագին համակ- րանքին համար . Վելհելմ կայսրը պատասխաներ է նոյն լեզուով .

Վելհելմ կայսրը տեսակցութիւն մը ունեցեր է նաև Պապին հետ . Տեսակցութիւնը տեւեր է 20 վայրկեան . Կայսրը՝ իշխանե- րուն ընկերակցութեամբ այցե- լեր է նոյնպէս Բամբուի Կարտի- նալին .

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Շատ սիրալիր եղած է Անգլիոյ թագաւորին և Ֆրանսական հան- րապետութեան նախագահին տե- սակցութիւնը Բարիկի մէջուտեեր է 30 վայրկեան . Գիշերը այցե- լեր են միասին Թէաթր—Պրան- սէն՝ լուսավառ և ամբողջալից փողոցներէ անցնելով . հետեւեալ օր ներկայ գտնուեր են Վէնսանի մէջ կատարուած զօրահանդէսին . զօրահանդէսէն վերջը Նիուարդ թագաւորը նախագահ Լուպիի և նախարարապետ Քոմպի ընկերակ- ցութեամբ զացած է Քաղաքա .

պետութեան Տունը , ուր ընդուն- ուած է մեծ ոգելորութեամբ եր- կու կողմէն արտասանուած սի- րալիր խօսքերէն եաքը թագա- ւորը և նախագահը ստորագրած են այցելութեան արձանագրու- թիւնը և խմած են մէյմէկ զա- ւաթ սպանիական հին գինի . Ժամը 12կէս ին վերագարձեր է Թագաւորը անգլիական դեպա- նատունը .

ՆՈՐ ԳՐԶՈՅ

«Պատ . Թումանեանի սուտերը և շահատակութիւնները» գրքով գրքոյկ մը ստացաւ Շարժումի խմբագրութիւնը , 16 երեսներէ բաղկացած այս գրքոյկին մէջ թումանեան որբերուն շորսը պ . պ . Ա . Գուլումեան . Հ . Աղապար- եան , Մ . Անդրէասեան և Մ . Բա- րաշամեան՝ ի դիմաց իրենց ընկերներուն կողմէն «պատմել հայ հասարակութեան այն բոլոր տխուր ու ճիշտ իրականութիւն- ներ որոնց ենթակայ և ակնատես ըլլալու նպով ի դժբաղդութիւ- նը ունեցեր են , կըսեն . իրենք .

«Մեր եղբրական ու ցաւալի անցնալը աչքի առջև ունենա- լով— կը վերջացնեն որբ . հեղի- նակները խնայեցէ՛ք Հայ Մար- տիրոսացու մատղաշ մնացորդ- ներուն ու ամեն հնարաւոր մի- ջոցներ ձեռք առէ՛ք զանոնք զերծ պահելու թումանեանի նման կեղտոտ անձերէ , որոնք ազգին մշտական վնասներ հասցնելէ զատ ուրիշ բան մը չունին ընե- լիք» .

Ն. ՄԱԿԱՏՈՒՓ

Անճաւօրը.—Չեր յօրուածին նիւ- թը հինցած է արդէն . Մոոցուած խնդիր մը չվերանորոգելու համար չպիտի հրատարակենք զայն . Պ . Հըրդար Աւետիսեան — Կուլաց . Պ . Նազարէթ Աւետիսեանին մեզի իր- կած ութ ֆրանքը ստացած ենք , բայց նամակն մէջ գրուած հասցե- ին անընթեան ըլլալուն՝ մինչև հիմա չկարողացանք թելթ խրկել . Այժմ մարտ 18էն սկսեալ կը խրկենք ձեզ «Շարժում»ը .

ԾԻՐԱՆԻ ԱՐԵՆԵԼԻՔԸ

Գրեց անգլիացի Ուիլիլմ Ուօթընի բանաստեղծը և հայերէնի թարգմա- նեց Սոսորով . կը ծախուի յետոն սանթիմի դիմել թարգմանին՝ Մ . ՍՐՄԷՆ ԱՐՏՕՆԶ 43 Տուկու Րուս Միսսոն (Անկղղիտ) Եւ կամ Ռուրէն Քաւապան փխտի վառնի .

ՕՏԳՈՐԻՆԿՆԷ

Мурадъ-Ераносянъ

Печатня «Взаимность» Варна